

ՀՀ մարզերում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմամբ գյուղատնտեսական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման համար պետության կողմից նախատեսվող միջոցառումները կուղղվեն գյուղական համայնքներում գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր ու միջին ձեռնարկությունների ձևավորմանը: Մասնավորապես, գծապատկեր 2-ում պատկերված առաջարկվող 260 փոքր ու միջին ձեռնարկությունների ձևավորմանը:

ՆՈՐԱՅԻ ՄԱՍԱՍԵՐԵԱԾ

տ.գ.դ., պրոֆեսոր

ՅՈՌԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՂԱԾՏՐԱՅԻՆ ԳԼԱՎԱՏՈՒՄԸ

Հողի կադաստրային գնահատումը և ագրարային հարցի ուսումնասիրությունն ունեն երկու ասպեկտ՝ պատմական և ժամանակակից: Տարրեր դարաշրջանների ագրարային հարաբերությունները և ագրարային հարցը ուսումնասիրվել և լուսարանվել են 20-րդ դարի մի շարք հայ տնտեսագետների և պատմաբանների աշխատություններում, հատկապես Մ. Աղոնցի, Հ. Թումանյանի, Ն. Թովմասյանի, Ա. Փափազյանի, Մ. Խոնդկարյանի, Մ. Եգանյանի և մյուս հեղինակների մենագրություններում և գիտական թեզերում: Նշված հեղինակների աշխատությունները վերաբերում են հիմնականում Հայաստանի միջնադարյան և նորագույն պատմության շրջանների ագրարային հարաբերությունների լուսարաննանը: Պրոֆ. Հ. Թումանյանը փորձում է տալ «Ֆեոդալական ունտա և գյուղացիության շահագործման այլ ձևերի» ընդհանուր բնութագիրը¹: Մյուս հեղինակներն իրենց ուսումնասիրությունը նվիրում են պատմության առանձին հատվածների դարաշրջաններին: Օրինակ՝ Լ. Քաքայանը լուսարանում է Զաքարյանների և մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանի, մասնավորապես մոնղոլների ագրարային քաղաքականությունը²:

Ա. Փափազյանը իր մենագրությունը նվիրում է Արևելյան Հայաստանի՝ XV-XVI դարերի ագրարային հարաբերություններին, մասնավորապես Սեֆերյան Իրանից ընդօրինակած ֆեոդալական հողատիրության, ինչպես նաև հարկային համակարգի ուսումնասիրությանը, որոնք ընդհանուր հետաքրքրություն են ներկայացնում Մերձավոր Արևելքի երկրների համար³:

Հայ տնտեսագետների հատուկ ուշադրությանն է արժանացել Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և ագրարային հարաբերությունների ուսումնասիրությունը: Այստեղ աշքի են ընկնում պրոֆ. Մ. Աղոնցի մենագրությունները: Ուշադրության են արժանի հատկապես պրոֆեսոր Մ. Աղոնցի հայերեն մենագրության հիմնադրույթները Հայաստանի այդ շրջանի ագրարային հարաբերությունների վերաբերյալ:

Խորհրդային և հատկապես կոլտնտեսային-խորհրդային ժամանակաշրջանի ագրարային համակարգը մերժեց ագրարային հարաբերությունների ամրող նախընթաց պատմական զարգացումը: Դրան համապատասխան մերժվեցին նաև ագրարային հարաբերությունների դարավոր-ավանդական կատեգորիաները և հասկացությունները՝ հողի մասնավոր սեփականությունը, ագատ շուկան, շահույթը, հողային ունտան և հողի գինը: Այդ կատեգորիաների օգտագործումն անգամ համարվում էր հանցանշան:

Ագրարային հարցը համարվում էր ընդմիշտ լուծված: Պաշտոնական և նույնիսկ գիտական մամուլը «խնամքով» շրջանցում էր այս ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրները՝

¹ Հ. Ե. Թումանյան, Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, Երևան, 1960:

² Լ. Լ. Բաբայն “Социально-экономическая и политическая история Армении в XIII-XIV веках” Москва, 1969.

³ Ա. Դ. Պապայն “Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках” Ереван, 1972.

որակելով որպես ազրարային հարցի ծախողված «լուծումներ»: Սակայն այդ հիմնախնդիրները հնարավոր չեր թաքցնել հասարակության աչքից: 1980-ական թվականների սկզբին ԽՍՀՄ մայրամուտին նրա դեկավարության կողմից հրապարակված «պարենային ծրագիրը» սեփական ազրարային քաղաքականության ծախողման ակնհայտ վկայությունն էր. 55 տարում չեր լուծվել երկրի տարրական պարենային խնդիրը՝ չնայած նրա ունեցած աշխարհում ամենալավ հողերի հսկայական պաշարներին: Պաշտոնական վիճակագրության տվյալները վկայում էին այն մասին, որ ԽՍՀՄ գյուղատնտեսության տեմպերը գնալով խամրեցին՝ մոտենալով զրյական աճին:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ազրարային հարցի ծախողման մասին էին վկայում տարաբնույթ վիճակագրական տվյալների ուսումնասիրությունները, ինչպես նաև գիտական վերլուծությունները, որոնք վկայում էին, մասնավորապես, լեռնային շրջանների կոլտնտեսությունների համատարած դիֆերենցիալ վճարների, գյուղատնտեսական լավագույն հողերի անտեսվար օգտագործման և աննախադեպ զանգվածային «Դուրս գրումների» (այլ խոսքով, լրման) մասին¹:

ԽՍՀՄ փլուզումը Հայաստանը «խորացրեց» սեփական տնտեսությունն ամենից առաջ գյուղատնտեսության համատարած-հախուսն սեփականաշնորհումով, որի հետևանքով Հայաստանը մտավ XXI դար՝ որպես գյուղացիական-ազրարային երկիր: Թեև վերջին (2001թ.) մարդահամարի տվյալներով գյուղական բնակչությունը կազմում է ամբողջ բնակչության 35%-ը, սակայն գյուղացիությունը հանրապետության ամենամեծ զանգվածային դասակարգն է, որը պաշտոնական վիճակագրական տվյալներով կազմում է 550 հազ. մարդ, սակայն իրականում այն 1.5 անգամ ավել է: Ընդ որում դա տեղի ունեցավ ոչ թե գյուղատնտեսության առաջընթացի (այն իրականում դեռևս չի «նվաճել» 1990թ. մակարդակը), այլ արդյունաբերության ահավոր անկման հետևանքով: ԽՍՀՄ-ից ժառանգած ազրարային խնդիրները կրկնապատիկ ավելացան: Ոլորտները, խնդիրները վերածվեցին գյուղացիության պարզ գոյացուման խնդրի, որի ակնհայտ դրսնորումներից մեկը բնակչության աննախադեպ արտագաղթն է:

Եվ այսպես, Հայաստանի հարցերի հարցը այսօր ազրարային հարցն է և ոչ միայն նրա այսօրվա «գյուղացիական» նկարագրի պատճառով: Մեր խորը համոզմամբ, այս ճյուղի վերելքի հետ է կապված Հայաստանի ազգային տնտեսության, այդ թվում արդյունաբերության նոր վերածնունդը: Ազրարային հարցի լուծման մտահոգությունը պահանջում է անդրադառնալ, թեկունք ընդհանուր կերպով, նրա հեռավոր և մերձավոր անցյալի պատմությանը: Ազրարային հարցի պատմությունը սուկ հայեցական հետաքրքրություն չէ միայն, այլ յուրատեսակ կամուրջ անցյալի եղելության առօրյա խնդիրների միջև:

Հողի տնտեսական գնահատումը ժամանակակից բազմակացութածն տնտեսության պայմաններում տնտեսվարման կարեռագույն տարերից մեկն է: Խորհրդային ազրարային համակարգի գոյության վերջին ժամանակահատվածում հայ տնտեսագետները հանդես եկան մի շարք աշխատություններով, որոնցում փորձ էր արվում հիմնավորել հողային ռենտայի և հողի տնտեսական գնահատման կոնկրետ եղանակը և արդյունքները: Հասկանալի է, որ հողային ռենտայի և հողի գնահատման փորձերը և հաշվարկները հիմնված էին համայնավարական ծեսնարկությունների կողեկտիվ և պետական գյուղատնտեսական, տնտեսական գործունեության հաշվետվությունների պաշտոնական ցուցակների հիման վրա: Որքան էլ այդ փորձերը և գնահատման արդյունքները ակնհայտ էին, այնուհանդերձ դրանք սայլը տեղից շարժեցին և հնարավորություն տվին կոտրել երկարամյա արգելքը, շրջանառության մեջ դնել հիշյալ

¹ Հ. Մանասերյան “Дифференциальная рента и рентабельность колхозов” Ереван, 1967г.

² Ս. Սահմանյան, Լ. Աղամյան, Հողի գնահատման տնտեսական պրոբլեմները, Երևան 1977:

տնտեսական կատեգորիաները, ինչպես նաև առաջին քայլերը կատարել հողի օգտագործման հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ¹:

Այսօր՝ հողի սեփականաշնորհումից հետո արմատապես փոխվել են ոչ միայն հողի տնտեսական գնահատման սոցիալական սահմանները, այլև անհրաժեշտ վիճակագրական բազան. ընդամենը մի քանի հարյուր խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունների փոխարեն գործում են մի քանի հարյուրհազարավոր տնտեսություններ, որոնք բնակ ենթակա չեն համատարած վիճակագրական հաշվառման-հաշվետվության: Կարելի է պատկերացնել այն դժվարությունները, որոնք առկա են ժամանակակից մասնավոր գյուղացիական տնտեսաձևի, գործունեության տնտեսական վերլուծության ճանապարհին:

Հողի կադաստրային գնահատման նպատակը հողօգտագործման հետ կապված հարկի, վարձավճարի, գրավադրման և այլ գործարքների օրենսդրական կարգավորումն է: Հողի կադաստրային գինը պատշաճ ձևակերպման դեպքում կարող է հիմք ծառայել հիփոտեկային վարկի համար:

Կադաստրային գնահատման համար ելակետային են ընդունված հետևյալ հիմնական ցուցանիշները՝

- մեկ հեկտար հողի բերրիությունը, եկամտաքերության գնահատականը,
- հիմնական ծախսերի գնահատականը,
- համախառն արտադրանքի հաշվարկած արտադրության գինը,
- պարբերական (ունտային) եկամուտը,
- այդ եկամուտի կապիտալացման ժամկետը (գործակիցը):

Այստեղ շարադրված առաջին երկու ցուցանիշները (հողի բերրիության և հիմնական ծախսերի գնահատականները) հիմնական նորմատիվային ցուցանիշներն են հողի կադաստրային գնահատման համար: Ընդ որում առաջինը որոշվում է հիմնական մշակաբույսերի երեք տարվա միջին բերքի շուկայական արժեքով (գներով), իսկ երկրորդը, այսինքն՝ նորմատիվային ծախսերը որոշվում են՝ նույն հողատարածքի վրա կատարած միջին փաստացի ծախսերին ավելացնելով, որպես վերարտադրության նվազագույն եկամուտ (7% ծախսերի նկատմամբ): Այլ խոսքով նման եղանակով հաշվարկած ցուցանիշը ներկայացնում է համախառն բերքի արտադրության գինը: Այստեղից ել տրամաբանորեն եիշալ երկու ցուցանիշները (այսինքն՝ համախառն արտադրանքի և նրա արտադրության գնի տարբերությունը որպես տվյալ հողամասից ստացվող պարբերական եկամուտ կամ ունտա):

Հողի կադաստրային գինը որոշվում է հաշվարկային դիֆերենցիալ ունտայի կապիտալացման եղանակով: Որպես կապիտալացման ժամկետ (կամ գործակից) ընդունվում է 33 տարի: Այսպիսով, եթե փորձենք հողի կադաստրային գնահատումն իրականացնել, այսինքն՝ ՀՀ-ում ընդունված մեթոդաբանությունն արտահայտել հաշվարկային բանաձևով, այն կարելի է ներկայացնել որպես ՀԳ=RXT, որտեղ R-ը միավոր հողատարածքից ստացվող հաշվարկային ունտայի եկամուտն է, T-ն՝ կապիտալացման ժամկետը (գործակիցը):

Հիշեցնենք, որ տարիներ առաջ (ավելի ստույգ՝ 1978 թ.) բազմայա տնկարկների տնտեսական գնահատման նպատակով մենք օգտագործում էինք, որպես զուտ եկամուտի և կապիտալացման գործակից, այդ տնկարկների ամորտիզացիոն ժամկետները (30 և 50 տարի)²:

Հողի գնահատման շարադրված եղանակը, որն ընդունվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից, ընդորինակված է ՌԴ պետական հիմնարկության համապատասխան կարգից:

Դժվար չի նկատել, որ հիշյալ բանաձևը էապես տարբերվում է հողի գնի տարածված բանաձևից, ըստ որի հողի գինը որոշելու համար հողային ունտան կապիտալացման է՝ եղնելով

¹ Ն. Մանասերյան, Լ. Աղամյան, Հողի գնահատման տնտեսական պրոբլեմները, Երևան, 1978:

² Նույն տեղում:

բանկային տոկոսադրույթից: Հիշեցնենք, որ ճիշտ այդպես է որոշվում նաև բաժնետոմսի շուկայական գինը, որի համար բաժնետոմսի թերած եկամուտը (դիվիդենտը) հարաբերվում է բանկային տոկոսադրույթին, $R= \text{բ} / \text{բ} \%$: Չուտ տեսական-ձևական մոտեցմամբ հիշյալ երկու բանածնն էլ տրամաբանական են, համադրելի: Իրականում բնավ այդպես չէ թեկուզ և այն պատճառով, որ բաժնետոմսի գինը և դրա հիմքում ընկած բանկային տոկոսադրույթը կուպիտ ասած խորհրդանշական թղթադրամային կատեգորիաներ են, որոնք կոչված են արտահայտելու իրական տնտեսական հարաբերությունները՝ կապված կապիտալի շարժի և շրջանառության հետ, մինչդեռ հողի գինը միանգամայն իրական տնտեսական կատեգորիա է, որն արտահայտում է հողային ավելի լայն առումով՝ ագրարային հարաբերությունները: Ծիշտ է, երկու դեպքում էլ գործ ունենք շուկայական ապրանքադրամական հարաբերությունների հետ, սակայն, եթե ունտան և հողի գինը իրական տնտեսական հարաբերության ձևեր են, ապա դիվիդենտը և բաժնետոմսի գինը ածանցյալ տնտեսական հարաբերության ձևեր են: Մեզ մնում է թերևս ավելացնել, որ պատմականորեն տնտեսական հարաբերությունների առաջին ձևերը եղել են և մնում են ագրարային հարաբերությունները, ինչպես որ սեփականության բոլոր ձևերի ակունքը եղել և մնում է հողային սեփականությունը, որից սկիզբ են առել նրա մյուս բոլոր ձևերը և տեսակները: Հողը եղել է, խոսելով ժամանակակից լեզվով անշարժ գույքի բոլոր տեսակներն ել անկրկնելի անսպառ և հավերժական տեսակը, նախակարապետյանը, և այսօր էլ դա անժխտելի իրողություն է: Տրամաբանական է, որ անշարժ գույքի մյուս տեսակների արժեքը և գինը ածանցյալներ են հողի գնից և ոչ թե հակառակը:

Շարադրված տեսակետը կարող է վիճելի թվական և, ինչ խոսք, առանձին լուսաբանման կարիք ունի:

Վերադառնալով հողի կադաստրային գնահատականին՝ պետք է նշել, որ այն բնավ վերջնական լինել չի կարող, թեկուզ այն պատճառով, որ հիմնված է ոչ թե իրական, այլ հաշվարկային նորմատիվային ելակետային ցուցանիշների վրա, օրինակ՝ հողի կադաստրային գինը որոշվում է՝ ելնելով կադաստրային (հաշվարկային) գուտ եկամտի գնահատումից:

Թերենք կոնկրետ օրինակ. Արարատի մարզի երկու Ուրց-Կոտայքի գոտում 3-րդ կարգի 1 հեկտար վարելահողից ստացվող գուտ եկամուտը գնահատված է 63,8 հազ. դրամ, իսկ մերձարարայան գոտում՝ 121,8 հազ. դրամ, կամ շուրջ 2 անգամ ավելի շատ: Քիչ առաջ մենք տեսանք, թե ինչ եղանակով է հաշվարկում այդ եկամուտը, այն տվյալ հողից ստացվող համախառն արտադրանքի և նոր արտադրության գնի (ծախսերի նվազագույն եկամուտ) պարզ տարբերությունն է:

Առկա են ոռոգման համակարգի հարաբերությունները և ջրօգտագործման վարձի հիմնախնդիրը: Հայաստանում և Արևելքում երկրագործությունն անհնար է պատկերացնել առանց ոռոգման: Ուստի պատահական չէ, որ հողի ու ջրի գերագույն սեփականատերը եղել է պետությունը: Ոռոգման գործոնը կարևոր է ոչ միայն գուտ տնտեսական, այլև սոցիալական ժողովրդագրական առումով, քանզի այնտեղ, որտեղ չկա ոռոգում, հաճախ չկա նաև բնակավայր և բնակչություն: Ոռոգումն ի սկզբանե վճռական դեր է խաղացել երկրի տնտեսական հզորության ապահովման հարցում: Եվ ընդհակառակը, ինչպես պատմությունն է վկայում, ոռոգման համակարգի փլուզումը հաճախ նախորդել է այս կամ այն տնտեսության կործանմանը:

Ոռոգման ջրի առկայությունը կամ բացակայությունը թելադրում է մշակաբույսերի ընտրությունը, ուրեմն և գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը: Այստեղից պարզ է, որ ջրօգտագործման հարաբերությունները որոշ իմաստով կարող են հանդես գալ որպես առաջին կարևորության հարաբերություններ:

Ոռոգման համակարգի տնտեսական հարաբերություններն իրենց արտահայտությունն են գուել «Ջրային օրենսգրք» մեջ: Այն սահմանում է ոռոգման համակարգի կառավարման կառուցվածքը, տնտեսվարող սուբյեկտների փոխադարձ պարտականությունները և գործա-

ոռությունները ոռոգման ջրի օգտագործման ոլորտում, ջրի վարձի որոշման սկզբունքներն ու չափանիշները և այլն:

ՀՀ կառավարության առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն տնօրինում է բոլոր ջրաղբյուրների մակերեսային և ստորերկոյա ջրերի բախչման և օգտագործման գործընթացները, կարգավորում դրա հետ կապված կազմակերպական, տեխնիկական և տնտեսական հարաբերությունները:

Հանրապետության մայր ջրատարների շահագործումն իրականացնում են համապատասխան ջրավագանների բաժնետիրական ընկերությունները, որոնք իրենց հերթին վարձակալական հիմունքներով ոռոգման ջուր են տրամադրում առանձին գյուղական համայնքներին: Համայնական ընկերությունները /դրանց ընդհանուր թիվը՝ 400-450/ իրականացնում են ներտնտեսային ջրանցքների շահագործման, նորոգման, ինչպես նաև ջրի վարձավճարի գանձման վերահսկողությունը:

Ոռոգման ջրի օգտագործման տնտեսական հարաբերությունների ասպարեզում առավել սուր հարցերից մեկը, թերևս ամենասուրը, ջրօգտագործման վճարելիության և ջրի վարձի սակագների տնտեսական հիմնավորման հարցն է:

Ինչպես սահմանվում է «ՀՀ ջրային օրենսգործում», ջրային ռեսուրսների օգտագործման, վերականգնման և պահպանման տնտեսական կարգավորման հիմնական սկզբունքը ջրօգտագործման վճարելիությունն է /հոդ. 76/: Այդ սկզբունքի իրագործումը ենթադրում է մի շարք գործուների հաշվառում, այդ թվում.

- ոռոգելի հողատարածքից ստացվող գյուղարտադրանքի համադրումն անջրդի հողերից ստացված արտադրանքի հետ,
- ջրօգտագործման արդյունավետությունը, մասնավորապես ջրօգտագործողի /սպառողի/ իրացրած օգուտը:

Ինչ վերաբերում է ջրօգտագործման վարձի սակագնին, նրա սահմաններում պետք է հաշվի առնելուն.

- ոռոգման համակարգերի հիմնական միջոցների փոխհատուցման ապահովումը,
- համակարգերի շահագործման ծախսերը, ինչպես նաև «ռողամիտ» շահույթի ապահովումը,
- սպառողների վճարունակությունը /հոդ. 77-79/:

Օրենքում նախատեսված է, որ ջրային ռեսուրսների կառավարման մարմինը կարող է սահմանված կարգով առաջարկել նվազեցնել ջրօգտագործման վճարները կամ տրամադրել ֆինանսական օժանդակություն ջրամատակարարներին և ջրօգտագործողներին՝ սուրսիդներ, հարկային արտոնություններ, վարկային ռեսուրսներ:

Օրենքով նախատեսվում է, որ ջրի վարձի սակագինը կարող է արտահայտվել կամ որոշակի թվային արժեքի /այսինքն՝ ջրի վարձի գումարի/, կամ որոշակի պայմաններում հիշյալ վարձավճարի հաշվարկային բանաձևի միջոցով /հոդ. 79/:

Մեր ընդգծած վերջին դրույթը չափազանց կարևոր նշանակություն ունի, թերևս ավելի կարևոր, քան ջրի վարձավճարի սակագնի «քվային արժեքը»:

- Այսպիսով, ջրի վարձի սակագնի որոշման հիմքում ընկած են երկու հիմնական գործոններ՝
- ջրային տնտեսության հիմնական միջոցների և ընթացիկ ծախսերի փոխհատուցումը,
 - ջուր սպառողների եկամուտները /օգուտը/ և վճարունակությունը:

Ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հիշյալ երկու գործոնները գարգանում են հակառակ ուղղություններով, ջրային տնտեսության ծախսերն անընդհատ ավելանում են /թեկուզ նյութերի և էլեկտրաէներգիայի թանկացման հետևանքով/, մինչդեռ ջուր սպառող գյուղացիների եկամուտները և վճարունակությունը նվազում կամ լավագույն դեպքում մնում է անփոփոխ: Արդյունքում՝ ջրային տնտեսության ջրային մարմինները տրտնջում են հիմնական

միջոցների աննախաղեաւ և խսպառ մաշվածության աղետալի հետևանքից, իսկ ջրօգտագործող գյուղացիները ջրի բարձր սակագնից:

Հիշեցնենք, որ 1998-2007թթ. ընթացքում ոռոգման ջրի վարձի սակագինն ավելացել է ավելի քան 3 անգամ: Իսկ որքանո՞վ են բարձրացել գյուղացիական տնտեսությունների եկամուտները, նրանց վճարունակությունը: ՀՀ ազգային վիճակագրության տվյալներով նշված ժամանակահատվածում գյուղարտադրանքի համախառն արժեքը համարելի գներով ավելացել է շուրջ 10%, իսկ գյուղական բնակչության դրամական եկամուտները 1 շնչի հաշվով կրճատվել են 10,5%-ով: Կրճատվել են նաև սպառողական ծախսերը¹: Այսպիսով, ՀՀ բնակչության վիճակագրությունը հիշյալ ժամանակաշրջանում անկում է ապրել, իսկ ոռոգման ջրի սակագինն խխստ ավելացել է, խախտվել է «Զրային օրենսգրքի» պահանջը, և ընդհանրապես խախտվել են տնտեսական օրենսգրքի ու համամասնությունների տարրական պահանջները: Ո՞րն է եղը այդ փակուղային վիճակից: Մինչև այդ հարցին պատասխանելը ծանոթանանք ՀՀ ոռոգման համակարգի կառուցվածքի ներկայիս սխեմային:

ՀՀ ոռոգման համակարգի կառավարման գործող կառուցվածքը ներկայացնենք հետևյալ գծապատկերով (2).

**Զրային ռեսուրսների
գերազույն սեփականատեր
/պետություն/**

**ՀՀ բնապահպանության
նախարարություն, Զրային
ռեսուրսների գործակալություն**

**ՀՀ կառավարությանն առընթեր
Զրային տնտեսության պետական
կոմիտե**

**Զրառ պետական փակ
բաժնետիրական
ընկերություններ**

**Զրօտագործողների /սպառողների/
ընկերությունները համայնքներում**

**Զրօտագործող
ընկերությունների միություններ**

Մի կողմ թողնելով ոռոգման համակարգի կառավարման գործող համակարգի արմատական կատարելագործման կարևորագույն հարցը՝ քննենք գործող համակարգի կառուցվածքի և ոռոգման ջրի սակագնի օրգանական կապը:

Գծապատկերը վկայում է այն մասին, որ ոռոգման համակարգի կառավարումը բաժանվում է երկու հատվածի՝ պետական հատված, որն ընդգրկում է ոռոգման համակարգի հիմնարար կառուցվածքները, մայր ջրատարները, ջրամբարները, այլ հանգույցներ /առաջին 3 վանդակները/ և տեղական կամ համայնքային հատված, որն ընդգրկում է ներտնտեսային ոռոգման ցանցը, դրանց շահագործումը /վերջին 2 վանդակները/: Հայտնի է, որ վաղնջական ժամանակներից ոռոգման համակարգի հիմնարար կառույցները և դրանց սպասարկումը եղել են պետության տնօրինության և հսկողության տակ, պետությունն է եղել ոռոգման ջրի գերազույն

¹ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան 2002, «ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը» վիճակագրական ժողովածու, Երևան, 2003:

սեփականատերը: Ինչ վերաբերում է ներտնտեսային ռողման ցանցին, ապա դրանց սպասարկումը և ծախսերը կատարվել են գյուղացիական համայնքների կողմից: Համայնքն է եղել այդ ցանցերի բնականոն շահագործման պատասխանատուն և իրավասու մարմինը:

Ուստի և տրամարանական է, որ ռողման համակարգի ստեղծման շահագործման ծախսերը միշտ կատարվել են գյուղական համայնքների կողմից: Մեր օրերում այս վերջին հանգամանքը հատկապես կապվում է տեղական ինքնակառավարման զարգացման միտումների հետ, որի օրգանական մասն է կազմում տեղական համայնքների ինքնածախսածակման սկզբունքի իրականացումը:

Ռողման համակարգի կառավարման գործող ուսումնասիրությունից այն եզրակացությունն է բխում, որ նրան պետք է համապատասխանի նաև ջրօգտագործման վարձի սակագնի կառուցվածքը: Այդ սակագնի առաջին մասն արտահայտում է ռողման համակարգի հիմնարար կառուցվածքի շահագործման ծախսերը, որոնք պետք է հատուցի և լսաւ եռթյան հատուցում է պետությունը: Սակագնի երկրորդ մասը կապված է ռողման ներտնտեսային ցանցի շահագործման հետ, իսկ ծախսերը տրամարանորեն պետք է փոխհատուցի գյուղական համայնքը՝ գյուղացիական տնտեսությունները: Արմատապես սխալ է սակագնի առաջին կեսը դնել գյուղական համայնքի վրա, նախ այն պատճառով, որ վերջինս ի վիճակի չէ դրանք փոխհատուցել երկրորդ՝ քանի որ համայնքը պատասխանատու չէ այդ կառույցների և դրանց շահագործման ծախսերի համար:

Ոչ հեռու համայնավարական անցյալում հողի, ջրի, ինչպես նաև այլ ռեսուրսների օգտագործումը հայտարարված էր անվճար, սակայն իրականում դրանց շահագործման համար վճարում էր պետությունն իր ընդհանրական գանձարանից: Վճարում էր մասնավորապես ռողման համակարգի կառուցման և շահագործման հետ կապված բոլոր ծախսերը: Թե որքանով էր արդարացված այդ սկզբունքի կիրառումը, այլ հարց է, որի մասին նշել ենք նախորդ շարադրանքում:

Մեր օրերում, երբ երկիրն անցնում է շուկայական տնտեսության, հողի, ջրի և այլ բնական ռեսուրսների օգտագործումը դրվում է վճարելիության սկզբունքի վրա, իսկ պետության տնտեսական գործառույթներն իրենց տեղը զիջում են շուկայական գործառույթներին: Սակայն հասարակությունը չի կարող ընկնել մեկ ուրիշ ծայրահեղության մեջ: Եթե նախկինում ռողման համակարգի բոլոր ծախսերն իր վրա էր վերցրել պետությունը, ապա այժմ հակասական միտում է նկատվում, այն է՝ այդ համակարգի բոլոր ծախսերը դնել գյուղական համայնքների, իսկ ավելի կոնկրետ գյուղացիական տնտեսությունների վրա: Յավոք, հենց այդ ուղղությամբ է ընթանում ՀՀ տնտեսական իրավասու մարմինների ագրարային քաղաքականությունը, որի քաղկացուցիչ մասն է կազմում ռողման ջրի ոլորտի քաղաքականությունը: Սակայն ջրօգտագործման վճարելիության հոչակված սկզբունքը կիրառվում է ակնհայտ ծայրահեղությամբ:

Քանի միայն այն չէ, որ ռողման ջրի սակագինը վերջին 5-6 տարիների ընթացքում բարձրացվել է 3 անգամ և չի համապատասխանում գյուղացիական տնտեսությունների վճարունակությանը: Ոչ պակաս կարենք է այն, որ հիշյալ սակագինը միտված է իր մեջ առնելու ռողման համակարգի շահագործման բոլոր ծախսերը, հիմնարար պետական կառույցներից մինչև ներտնտեսային ցանցի ծախսերը:

Արարատյան հարթավայրի տնտեսություններում 1 խ. մ. ռողման ջրի սակագինն այսօր կազմում է ավելի քան 7,8 դրամ, որից շուրջ 4 դրամը՝ պետական համակարգի ծախսերի բաժինը, 3-4 դրամը՝ ներտնտեսային ցանցի ծախսերը: Այսպիսով, գյուղացիական տնտեսությունների վրա է դրվում ամբողջ ռողման հանակարգի շահագործման ծախսերի հատուցումը, որը ոչ միայն վեր է այդ տնտեսությունների ֆինանսական հնարավորություններից /քավական է ասել, որ այսօր ջրի վարձը 1 հեկտարի հաշվով շուրջ 3 անգամ գերազանցում է հողի հարկի գումարին/, այլև սկզբունքորեն սխալ է: Ուստի զարմանալի չէ, որ ջրի օգտագործման վարձի գումարը չի հաջողվում հավաքել նույնիսկ կիսով չափ:

Օրային տնտեսության տեղական մարմինները, վկայակոչելով բնակչության հետ կնքած պայմանագրերը, 2004թ.-ին դատական գործ են հարուցել ջրի վարձի գանձումը չկատարած հայցվորների դեմ, և դատարանի որոշմամբ զանգվածային պահումներ են կատարում «մեղափոր», գյուղացիական ընտանիքների բռշակառու անդամների կենսաթռշակներից: ՀՀ ԱԺ միջամտությունից հետո այդ գործընթացը կասեցվել է: Սակայն իիմնախնդիրը չես կարող կասեցնել, այն շարունակում է մնալ լարված և լուծում է պահանջում: Ոչ դատական լուծում:

Երեսութիւն գանգվածային բնույթը վկայում է այն մասին, որ ոռոգման ջրի օգտագործման տնտեսական հարաբերությունները ակնհայտորեն խեղաքյուրվել են, և ամբողջությամբ ջրային օրենսդրության առանձին հարցեր ըստ երթյան սխալ հիմքերի վրա են կառուցված և արմատական բարեփոխման կարիք ունեն:

Ոռոգման ջրի վարձի գործող սակագները, ինչպես նշվեց, չեն համապատասխանում գյուղացիական տնտեսությունների վճարունակությանը, շուրջ 3 անգամ գերազանցում են հողի հարկի գումարին և վերջապես ոռոգման համակարգերի գործող կառուցվածքին: Վերջինս օրենկությունների պահանջում է սահմանագատել պետական և տեղական մարմինների /համայնքների/ տնտեսական գործառույթները և պատասխանատվությունը ոռոգման համակարգի երկու հատվածների նկատմամբ, իսկ ներտնտեսային շահագործման ծախսերը համապատասխանորեն դնել ջուր սպառող համայնքների վրա:

Տնտեսական պատասխանատվությունն ու գործառույթների նման սահմանագատումը իրատեսական հիմքի վրա կդնի ոռոգման համակարգերի շահագործումը և նրանց վերականգնման ծախսերի փոխհատուցումը: Նպատակահարմար է նաև ջրի վարձի կենտրոնացումը գյուղական համայնքների գանձարանում, ինչը կրարձրացնի նրանց պատասխանատվությունը ջրի օգտագործման ոլորտում, ինչպես նաև նրանց ինքնակառավարման և ինքնաժինանսավորման գործընթացները:

Մինչև այժմ մենք չենք անդրադարձել թերևս ամենակարևոր հարցին. արդյոք գոյություն ունի², թե՝ չունի որևէ կապ ջրօգտագործման և հողօգտագործման վարձերի միջև: Պարզ բանականությունը հուշում է, որ այդ կատեգորիաների միջև կապը նույնքան բնական և պարտադիր է, որքան հողի և ջրի միջև: Նախորդ շարադրանքում արդեն նշել ենք այն փաստը, որ հողատերը /պետությունը կամ ֆեռդալը/ գյուղացիությունից հարկ է վերցնում սովորական հողերից բերքի 1/10-ը, իսկ ոռոգելի հողերից՝ բերքի 1/5-ը, այսինքն՝ կրկնակի չափով: Դա արտահայտվել է նաև օրենսդրական իրական փաստաթղթերում¹: Դա համապատասխանում է նաև մեր օրերի հնչուն իրողությանը: Հայտնի է, որ հացահատիկի և մյուս հիմնական պարենային մշակարույսերի բերքատվությունը ոռոգելի հողերի վրա 2-3 անգամ ավելի բարձր է, քան անջրդի հողերի վրա:

Դրանից առնվազն երկու եզրակացություն է բխում, նախ՝ այն, որ ոռոգելի հողերի օգտագործման համար գյուղացին վճարել է կրկնակի հարկ՝ կեսը հողի, մյուս կեսը ջրի համար: Եվ երկրորդ, ջրօգտագործման և հողօգտագործման վարձը /հարկը/ մեր պատմության մեջ հանդես են եկել ոչ թե առանձին-առանձին, այլ միասին: Միանգամայն անվիճելի է, որ եթե անգամ չընդունենք ջրօգտագործման վարձի առանձին գոյությունը /որը խիստ վիճելի է/, ապա այս դեպքում էլ վերջինիս հիմքում ընկած են հողի բերքիությունը, եկամտարերությունը: Ոռոգման բերած օգուտը արտահայտվում է նրա բերած հավելյալ բերքի մեջ, այդ բերքից էլ պետք է գանձվի ջրի վարձը:

Մինչդեռ այսօր ջրի վարձի որոշման հիմքում դրված է բոլորովին այլ մոտեցում, նրա հաշվարկի հիմքում դրված են ջրային տնտեսության ծախսերը /սպառողների վճարունակությունը մնում է օրենքի թղթի վրա՝ ոչ ավելին/: Ինչ խոսք, այդ մոտեցումը ևս բննարկման կարիք ունի, սակայն հեռու է կատարյալ լինելուց:

¹ Սևիրար Գոշ, Դատաստանագիրը:

Իհարկե, ոռոգման վրա հասարակությունը հսկայական ծախսեր է կատարել, մասնավորապես Հայաստանի ոռոգելի հողերի շուրջ կեսը ջուր է ստանում պոմպակայանների միջոցով /մեխանիկական ոռոգում/, որը գոյություն չուներ պատմական անցյալում: Սակայն մեր խոսքը հենց այն մասին է որ ոռոգման համակարգերի գոյությունն ապահովվել է պետական միջոցներով, և այսօր անհնարին է այդ համակարգի ամբողջ ծախսերի բեռը դնել գյուղացիական տնտեսության ուսերի վրա, ոչ միայն վերջինիս տկարության պատճառով, այլև սկզբունքային նկատառումներով, ենթակա ոռոգման համակարգի երկու հատվածների /պետական և համայնքային/ կառավարման և տնտեսական գործառույթների բնույթի սկզբունքային տարրերությունից, որի մասին արդեն խոսվել է:

Ասվածից ակնհայտորեն երկու եզրակացություն է հետևում:

- Ոռոգման ջրի վարձի քաղաքականությունը լուրջ վերանայման կարիք ունի, այն այսօր հիմնված է ծախսային գործոնի հաշվառման վրա, մինչդեռ պետք է հիմնված լիներ եկամտային արդյունավետության գործոնների հաշվառման վրա: Որպես «վերատուգիշ ցուցանիշ», պետք է ելնել հողի հարկի գործող նորմատիվներից: Ջրի վարձը 1 հեկտար ոռոգելի հողատարածության հաշվով չի կարող գերազանցել հողի հարկին:
- Առաջիկա հեռանկարում անհրաժեշտ է միացնել հողի հարկը և ջրի վարձը, այդ երկու գանձումները պետք է հանդիս զան միասնական՝ հողի հարկի տեսքով: Առավել ևս, որ այսօր անշարժ գույքի կադաստրի պետական ձեռնարկություններն արդեն կիրառում են եկամտի հաշվարկը ոռոգելի և անջրդի հողերի համար առանձին: Հողը և ջուրը բնության անկրկնելի բարիքներ են: Զուրը հողից քանի չէ:

ԱՎԵՏԻՔ ՆԱԶԱՐԵԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմայի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏԱՐԱԾԵՎԱԾԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿԵՇՈՄԱՆ ՀԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Տարածքային միավորների զարգացման հավասարակշռվածությունը պետք է գնահատել զարգացման բազմաչափանիշային համակարգի օպտիմալ կառուցվածքի և ֆինանսատնտեսական ցուցանիշների աճի տեսանկյուններից: Հավասարակշռված զարգացումը պահանջում է ապահովել ներդրումային ռեսուրսներ, արտադրական և ֆինանսական գործընթացների փոխահամաձայնեցում՝ օգտագործելով հավասարակշռման չափանիշների կարգավորման մեխանիզմներ: Միավորների հավասարակշռված զարգացման գնահատման և կարգավորման համար օգտագործվում են հետևյալ չափանիշները.

1. Միավորման զարգացման գնահատման գլխավոր չափանիշի՝ զուտ բերված արժեքի կիրառելի մեծությունը և կապիտալի կուտակման հնարավորությունը:
2. Զարգացման հավասարակշռվածության պայմանները՝ կախված ռեսուրսապահովումից, ներդրումային ռեսուրսների արժեքից, շահութաբերությունից և շահույթի կուտակումից:
3. Զարգացման հավասարակշռվածության աստիճաններն ըստ հավասարակշռման կառուցվածքի, եկամտի, ռիսկի և իրացվելիության:
4. Ներդրումային ռիսկի դիվերսիֆիկացումը՝ հաշվի առնելով առանձին միավորների տարածքային և ճյուղային զարգացման ուղղություններն ու իրականացման ծախսները: